ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

20.12.2018թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՂԱՆԻ ՀԱՄԱԿՐԳԻՉՆԵՐԻ, ԱՆԽԱՓԱՆ ՍՆՈՒՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ և ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԵՐՎԵՐՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան « » «դեկտեմբերի» 2018թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Հարությունյանի, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմաններն և հիմք ընդունելով 20.12.2018թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-2» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը. կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 3.1 կետում նշված «16 095 600 (տասնվեց միլիոն ինսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «16 856 018 (տասնվեց միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար տասնութ) ՀՀ դրամ» բառերով:

1.2. Պայմանագրի 3.3 ենթակետում ամրագրված «դեկտեմբերի 20»-ը բառերը փոխարինել «դեկտեմբերի 28»-ը բառերով

1.3. Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ապրանքների մատակարարման ընդհանուր գինը սյունակի 2-րդ չափաբաժնում նշված «1890000» թիվը փոխարինել «2079000» թվով, իսկ 6-րդ չափաբաժնում նշված «6285600» թիվը փոխարինել «6857018» թվով, ինչպես նաև հանել <<ապրանքների մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:>> բառերը:

1.4. Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.5. Պայմանագրի 3-րդ կետը լրացնել 3.2 ենթակետով.

«3.2 Պայմանագրի գնից՝ 16 856 018 (տասնվեց միլիոն ութ հարյուր հիսունվեց հազար տասնութ) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ»:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Էյչ Գրուպ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
Հ/Հ՝ 900011192052	Հ/Հ՝ 2500010488760100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01254973
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Կ. Հարությունյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ
POLADYAN KAREN 1911770055 Digitally signed by POLADYAN KAREN 1911770055 Date: 2018.12.26 17:24:38 +04'00'	Digitally signed by HARUTYUNYAN KAREN 2605840182 Date: 2018.12.25

Հավելված N 1

«20» դեկտեմբերի 2018թ. կնքված
«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-2» ծածկագրով պայմանագրի
« » «դեկտեմբերի» 2018թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը**	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	
			դեկտեմբեր	**Ընդամենը**
2	30216110/501	Սկաներներ համակարգիչների համար, Epson	2 079 000	2 079 000
6	31151120/508	Անխափան սնուցման աղբյուրներ, FSP	6 857 018	6 857 018
8	48821200/504	Համակարգչային սերվերներ, DeLL EMC	7 920 000	7 920 000

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192052
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

POLADYAN KAREN 1911770055

Digitally signed by POLADYAN KAREN 1911770055
Date: 2018.12.26 17:24:53 +04'00'

ՎԱՃԱՌՈՂ
«Էյչ Գրուպ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
Հ/Հ՝ 2500010488760100
ՀՎՀՀ՝ 01254973
«Արմսվիսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Կ. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by HARUTYUNYAN KAREN 2605840182
Date: 2018.12.25